


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և. Պոլսոյ հար 8 ՄԷՃ.
» Գաւառաց » 10 ՄԷՃ.
վեցամեայ և. Պոլսոյ » 4 ՄԷՃ.
» Գաւառաց » 3 ՄԷՃ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 փր.
յանուցման տողը մէկ անգամի հաւ.
ձար 3 դուրուշ, երկու անգամի հաւ.
ձար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ սահարկութիւն կրկնայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 12 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 20 մարտ.

Մար.—Մահան մարտնախաղին մէկ
նամակը որ լրագրաց մէջ հրատա-
րակուեցաւ, Օրինաւորական ատե-
նաբաններուն անցեալ չորեքշաբթի
աւուր նախին մէջ յայտնած յայտերն
անուղղակի ստու կը հանէ, և Պ. Տը
Պրոկիլին ըրած յայտարարութեանց
հաւանութիւն կուտայ իբրեւ համա-
ձայն իւր յայտարարութեանց թէ օ-
րինաւորակ հաստատել իրաց կար-
գին իւր եօթնամեայ իշխանութեան
միջոցին յարգել պիտի ապ:

Լոնտոն 20 մարտ.

Կը հաւատան թէ Եղիստոսի խը-
տիվը թուրքից հաշուին համար 199,
000 լիրա պիտի է մնալից պանքա-
յին, որպէս զի Օսմանեան փոխառու-
թեան մ'ապրիլ մէկին վճարուելը
կտրուենք վճարուին:

Փաղուհեոյն ատենախոսութեան
ի պատասխան պատրաստուած ու-
ղերձներն երկու խորհրդարաններէն
ալ ընդունուեցան:

Բէշթա 20 մարտ.

Հունգարիոյ նոր նախարարու-
թիւնը կազմուեցաւ. Պ. Պիլթօի նա-
խագահութեամբ:

Պէրլին 20 մարտ.

Երեսփոխանաց ժողովին յանձ-
նաժողովը խաղաղութեան ժամանակ
Բրուսելոյ զօրաց թիւը 384000 որոշե-
լու առաջարկութիւնը չընդունելով,
զինուորական զործոց նախարարին
յայտարարեց թէ զինուորական օրի-
նաց ծրագիրն յանձնաժողովին ա-
ռաջարկած փոփոխութիւններով ան-
ընդունելի եղած է:

Լոնտոն 20 մարտ.

Հասարակաց խորհրդարանը Զատ-
իկ ատներուն պատճառաւ մարտ 31
էն մինչեւ ապրիլ 13 պիտի գոյուի:

Կառավարութիւնը Հնդկաստանի
սովին օգնելու համար տասն միլիոն
լիրայի փոխառութիւն մ'ընելու հը-
րաման կը խնդրէ խորհրդարանէն:

Սըր Կ. Վոլդէ զօրապետն իր ըս-
պայախումբին հետ Բօրթմուտ հա-
սու:

Վիեննա 22 մարտ.

Ֆրանչիսկայ Զիքի կոմսը Կ. Պոլսոյ
գետական անուանեցաւ փոխանակ
Լիւտովի կոմսին:

Փարիզ 21 մարտ.

Օսմանեան կառավարութիւնը
1873 ի փոխառութիւնը կնքողներուն
հետ կարգադրութիւն մ'ստորագրեց,
որոյ գլխաւոր պայմաններն ասոնք են.

Կառավարութիւնը 1873 ի փոխա-
ռութեան չմասնաւոր 200 հազար Բա-
ժմաներն 267,50 ական ֆրանքի կը
գնէ. վեց ամէն վճարելու պայմա-
նաւ: Յիշեալ փոխառութիւնը կնքող-

ներն ալ իրենց ամեն պահանջումնե-
րէն կը հրաժարին և 1875 փետրվա-
րէն առաջ նոր փոխառութիւն մ'ը-
նելու արգելքն ալ կը վերնայ:

Այս կարգադրութեամբ Օսմանե-
ան կառավարութիւնը կը յուսայ թէ
Պապիլի վճարներուն և թէ՛ իւր ու-
րիշ պիտոյից համար հարկ եղած դը-
րամը գտնել:

Փարիզ 21 մարտ.

Օսմանեան գանձուն եղած փո-
խառութեան կը մասնակցին, Բօն-
թառ 8 1/2 քոնթին Պանքան, Փարիզի
Պանքան և Օսմանեան Պանքան:

Լոնտոն 21 մարտ.

Օսմ. Բօնա. 41 1/2
փոխ 4865 58
» 4869 53
» 4874 58
» 4872 66 1/4
Անգլ. Բօնա. 92 1/8

Վիլլերու 20 մարտ.
Բաժակի Միտիլի—Օրէան 8 1/4
Մարտ. 23000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական կառավարութիւնը
տառամորդի տուրքն առժամանակ-
եայ կերպիւ աւելցնելուն պատճա-
ռաւ որոշեց որ գաւառաց երկրա-
գործ ժողովուրդներն այս տարի ա-
զատ ըլլան գաւառաց խնայութեան
քննուկներուն վճարած տարեկանէն:

Կաթոլիկ Հայոց կայաւածական
խնդրոյն ըննութեան համար Բ. Դը-
րան կազմած խառն յանձնաժողովը
կիրակի օրն իւր երկրորդ նիստն ը-
րաւ Բ. Դուռնը:

Կրտսի թէ Յանձնաժողովոյ Հայ
և Յոյն անդամք, վաղուց ի վեր հա-
տատեալ ու նուիրագործեալ սովո-
րութեան և Գիւլէթեան Պատրիար-
քին շնորհալ կայսերական Պէռութին
տրամադրութեանց համաձայն յայ-
տարարեւ են թէ Կաթոլիկ Հայոց բո-
լոր ազգային և կրօնական սեփակա-
նութեանց աւանդապահն ու վերա-
տեսուչը Պատրիարքն ըլլալով, քանի
որ Հաստնեան կուսակցութիւնը Պատ-
րիարքին իրաւասութեանէն կը բաժ-
նուի: Կրտսար այն սեփականութիւն-
ներէն մասն ունենալ:

Խափանեալ Հաղպիւղ լրագրին
տէր Ֆիլիք Էֆէնտին թէ՛ կրակի ա-
նունով թուրքերէն նոր թերթ մը
հրատարակելու արտօնութիւն ստա-
ցաւ Բ. Դուռնէն:

Անգլիական Խաղերան անուն վա-
ճառագործ մեծ չափնաւան անցեալ
չորեքշաբթի օրը Մարմարայի ծովուն
մէջ Գալաքըրմ—Պուրուշի առջև խը-
րեցաւ, և հիմա ամեն ջանք Վըլլայ
մէջի ջուրը պարպելով տղատելու:

Վաղ իրիկուն Կէտիկ փաշայի Օս-
մանիէ թատրոնը Ալէքսանտր Տիւ-
մայի ամենէն ընտիր և հետաքրք-
րաշարժ մէկ թատերադրութիւնը՝
այն է՝ Նէլի Աշտարակը (Լա Թուր
տը Նէլ) առաջին անգամ պիտի ներ-
կայանէ ի նպատակ իւր գլխաւոր
գերասանուհիներէն մէկուն՝ Տիկին
Պայծառ Ֆրանսուէզանի:

Կը յուսանք որ թատերասեր ազ-
գայինք կը վաւթան իրենց ներկա-
յութեամբ պատուել այս երեկոյթը,
որ թատերական եղանակին մէջ ա-
ռաջին տեղ մը բռնելու արժանի է:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԵՄԵՐ ՈՒՄԴՈՒՄԷ

11 մարտ. Երկուշաբթի իրիկուն 47.32
12 » Երեքշաբթի առաւօտ 47.6
Կէս օր 46.23

Կ. Պոլիս մարտ 11

Սօսիէ թէ ժէնըայի բաժինք Անգլ. իր. 6.45
« Գոխանակութեան » 3.30
Կ. Պոլսոյ Պանքային » 4.30
Քրէտի ժէնըայ » 7.30
Քրէտի Ոսթրո—Թիւրք 3
Երկաթուղեաց հիւս 36

Փոխ. 4863 » 49
» 4865 » 306
» 4869 » 276
» 4872 » 69
Փոխ. 1873 » 274
Թրամուէյ 0 մ. իր 7.20

ԸՆԹԱՅՔ ԴԻՍԿՈՆ

11 ՄԱՐՏ

Անգլ. փրա զօրուշ 111.5
Կառ. առակի » 88.6
Եւր. փրա Ռուս » 90
Գ. փր. 54.23
Գինգ փրա » —
Հինգիոց » 405
Պալմ » 423

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը
Ներսէս Արքեպիսկոպոս Տեղապահական
պաշտօնը յատուկ հեռագրով շնոր-
հաւորեց:

Կը լսենք թէ Սահմանադրութեան
վերաքննիչ յանձնաժողովն իր քանի
մը թերթէն բաղկացեալ տեղեկագը-
րին տպագրութիւնը որպէս թէ չկըր-
նալով յառաջիկայ ուրբաթ օրէն ա-
ռաջ աւարտել, խնդրեւ է Գաղ. Ժո-
ղովն որ ընդհ. ժողովոյ գումարումն
ուր օր ետ ձգէ. Գաղ. ժողովն ալ
հաւանութիւն տուել է:

Այս յետաձգութեան պատճառ-
կին մէջ Զոյիլեանց կողմէ գաղափ-
րիտում մը կը կապակածուի, այն է նոր
մեքենայութիւն մը նիւթերու հա-
մար քանի մ'օր ժամանակ վատը-
կելու դիտում: Որովհետեւ լաճնուս
նայելով իրենց պատրաստած սեղա-
պահական և պատրիարքական ընտ-
րիկներուն քուէ վաստկներու հա-
մար երեսփոխանաց տուններն ու սեն-

ՊԱՅՄԱՆՔ

Գուրու գացած լրագրաց ճանդ ու
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
—Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո-
լիս, Չինիլի խան, Մասիսի գրասեն-
եակը:
Համբու ծախքը չվճարուած հա-
ժակ չընդունուիր:

ՕՐՈՒՄՆ ԽՆԴԻՐ

Եկեղեցական Համագումար ժո-
ղովն անցեալ երկուշաբթի օր ալ ժո-
ղով և ատենան ունեցաւ ի Պատրի-
արքարան: Ժողովական Ս. Հարք, ան-
փոյթ բողոքով Ս. Տեղապահի բա-
ցակայութեան կամ հրաժարման
դէպքէն, սիրաջան փոյթ մը միայն
կը տաճէին խաչատուր եպիսկոպոսն
Աղթամար զրկելու:

Կարծես Սուրբ Հարց Հինաց եւ
գործոց սահմանը դատ է բողոքովին
Աղթամար կեդրոնէն. Ժողովուրդեան
այսքան իրարանցողութիւն իրենք ժըզ-
տելով կ'անկարկեն, և առժամանակ-
եայ նախագահ անուանելով իրենց՝
Գեր. Թադէոս եպիսկոպոսը, գործ եր-
նին կը շարունակեն: Թադէոս Սրբա-
զան՝ աղթին Վեժին և փոքուն ծա-
նօթ պարզատումար ծերուկ մ'է, և
ինչ հրաւեր որ ըլլայ իրեն կընդու-
նի. . . առանց հրաժարելու, և ա-
ռանց պարագաները նկատելու:

Ներողութիւն կը լսեցինք մ'ալ
ընթերցողներէն՝ սա՛ Համագումար
ժողովոյ կազմութեանը վրայ դրե-
լու: Սահմանադրութեան մէկ յօդ-
ուածը կրտէ. «Համագումար ժողո-
վը կը կազմուի Պոլսոյ մէջ գտնուած
քաղ. եկեղեցականներէ. . .»: Իսկ
ուրիշ յօդուած մը կրտէ, «Երբ կը-
րօնական ժողովն իր ձեռնհասութե-
նէն վեր գտնէ խնդիր մը, համա-
գումար ժողով կը կազմէ Պոլսոյ մէջ
գտնուած եպիսկոպոսներէն, քարու-
զիներէն և աւագերէց ու ավոռա-
կալ քահանաներէն. . .»:

Արդ մենք Սահմ. այս երկու կը-
տոր դրուածքը իրարու հակառակ
կը տեսնենք. վասն զի մէկին մէջ
բոլոր եկեղեցականները կրտէ, միւ-
սով՝ խտիր և ընտրութիւն կընէ: Մի-
թէ կրնայ ըսուիլ թէ՛ եպիսկոպոսնե-
րը, քարուզի կարգուած վարդապետ-
ները, աւագ երէցներն ու ավոռա-
կալները բարձրատիճան ըլլալով խե-
ղահապ, իմաստունն ու արժանաւորն
ալ նոքա են: Մնացեալները՝ այսին-
քէն հասարակ քահանաները կամ
պաշտօն չունեցող վարդապետներն
անշուշտ տղէտ և անարժան են Ե-
թէ այդպէս է, նոքա և ոչ իսկ եկե-
ղեցական պէտք է ըլլան Բայց մենք
հասարակ քահանաներ կը ճաննանք,
որք ոչ միայն աւագներէն, այլ եւ
քանի մը եպիսկոպոսներէ անգամ
աւելի լուրջ գաղափարութիւն, աւե-
լի հմտութիւն, և պաշտօնի ու գի-
տութեան մէջ աւելի արժանաւորու-
թիւն կը կրեն իրենց վրայ. և այս
միայն եղեր է՝ կարծես անոնց աւագ-
երէց կամ ավոռակալ չըլլալուն
ալ պատճառը, Կարելի չէ՝ տեսնել
նաեւ վարդապետները՝ որք անպաշ-
տօն կը թափառին, և իրենց մէջ

այնպիսիներ կան, որք տասնապատ-
տիկ առաւել արժանիք ունին քան
զուրկը մը՝ որ թէ՛ քարոզիչ, թէ՛ դա-
սաստու, թէ՛ ժողովներու անդամ,
թէ՛ ատենադպիր, և թէ՛ ժողովակ-
ներու ալ նախագահ է՝ միայն իր վա-
տազդաց ընթացքն համար:

Սակայն այս գրեթէ ոչ թէ օ-
գուտ մը պիտի ըլլայ այդ արդէն
զրկեալ արժանաւորաց, այլ դուք
առաւել ևս արհամարհուին. քանզի
կրօնական ժողովն և համագումարի
դիւանը պիտի կասկածին թէ այս
գրուածքն անոնց կողմէն կամ անոնց
մէջէն է. մանաւանդ երբ կարծեն որ
այս տողերը գրողս ալ իրենց ճան-
ցած ամենակոնքս եկեղեցականնե-
րէն մէկն է, իրենց վրէժն իմ դադա-
թանս վրայ կը թափեն, և Աղթա-
մարայ խնդիրը պահ մը թողլով լսմ
ալ դատաւարանս կ'սկսին յորինակ և
'ի հրատապութիւն խնարհ կարգի ե-
կեղեցականաց, հաւատարմի՛ ըլլա-
լով սուրբ Աւետարանին, որոյ մէջ
Քրիստոս Աստուած իր եկեղեցւոյ իշ-
խանութիւնն այսպէս կը սահմանադ-
րէ. «Իշխանք ազգաց տիրեն նոցա
և որք իշխանն բարերարք կոչին.
բայց ոչ այնպէս և ի ձերում միջի.
այլ որ կամեցի 'ի ձեռն մեծ լինել, ե-
ղիցի ամենեցուն կրտսեր և պաշտօն-
եայ»:

Եւ եկեղեցւոյ բարեկարգութիւն
ուղղորդելն չեմ, այլ եկեղեցական-
աց բարեկարգութիւնը կը պահան-
ջեմ: Ես եկեղեցւոյ իշխանութիւնն
ամենէն աւելի յարգողներէն եմ.
բայց այդ իշխանութեան սուրբ՝ ան-
ձին օրինակաւ ուղղութեան ու խո-
նարհութեան առաքինութիւնը կը
ճանաչեմ: Քրիստոս վայ կը կարգաց
կեղծաւորաց: Պօգոս առաքեալն ալ
որմբեւեայ կանուանէ զանոնք:

Համագումարին մէջ խաչատուր ե-
պիսկոպոս կարող է մէկ խօսքով արդա-
րանաւ ևս իր ամբողջ դատաւար կե-
ղծաւոր խոնարհեցնելով կուրծքը բա-
նայ և մէն մի դատողաց մէկ մէկ քար
բաժնէ ու ըսէ. «Այդ արեւ ես մեղա-
ւոր մ'եմ», քարիծուելու արժանի.
բայց կաղաչեմ որ ձեզնէ անմեղը
թող առաջին քարը զարնէ»:

Բայց այդպէս չընէր. արդարա-
նալ կը ճգնի, մինչդեռ մէկ կողմն ա-
րիւնթաթաւ գիւղի մը կայ բողո-
քոյ, և միւս կողմն ալ ամբողջ մը և
խորան մ'այրկացեալ իւր փեսայէն
բռնաբարեալ խաչատուր սրբազանէն:
Վարդաթեանէն հրաման չառնելով և
նախորդին կենդանութեան ժամա-
նակ օժտելով մեծ և անողորմելի դա-
տախաղութիւնն են իրեն գէտմ. Եւ
ինքն միայն այսքան փառս ունի ա-
սանց գէտմ ըսելիք՝ թէ «դիւ բռնու-
թեամբ օժեցին, թէ նախորդս՝ հը-
րաժականը դրած էր»:

Իրնաւ հաւատալ, ընթերցող,
թէ մարդն ինքը չուզէ, և բռնի օ-
ձեն զինքը: Ընդունինք այս մերե-
մէն ահա գեղեցիկ ամիթ, որբաղան
հայր, ձեզ այդ բռնութեան օժու-
մը, դու ալ կաղաչիս, ամբողջ ալ,
ազգն ալ:

Եթէ նախորդդ հրաժարական ար-
ւած էր, ապա երբ թող, հրաժա-
րականը Պօլիս դար, ընդունուէր,
և քեզ հրաման չրկուէր, ապա օժ-
ուէր շատ փառաւոր ու օրինաւոր
կըլլար:

Սրբազան Հայր, քու անձիդ հա-
մար այսքան աշխատելուդ տեղ՝ ան-
դամ մը բողոք տալիս նախորդիդ
սպանութեան վրայ քննութիւն ընե-
լու համար. ո՛հ, այս կէտն ինձ հա-
մար կարի ուշագրութեան արժանի
է: Քննել տուր, Սրբազան, նախոր-
դիդ սպանիները դատելն, որպէս
զի դու ալ ներկայիս և ապագային

մէջ կասկածէ աղաւթս, արդարա-
նաւ, միանգամայն և երբ Աստուած
կամենայ ու ամբողջ դատաւար, քեզ
համար ալ ապահովութիւն ունեցած
ըլլաս: Եթէ ըսես թէ երկար միջոց
պէտք կըլլայ այդ բանին համար,
ամբողջ կը խանդարի առանց ամ-
բողջութեան վարժեցար. ամբողջ ալ
քու բացառիկութեամբ, ինչպէս մին-
չեւ. ցայսօր կառավարած ես, դարձ-
եալ կը կառավարես. փառք Աստու-
ծոյ, առաքիչ. ալ պահաս չէ, քանզի
դու երէկ 500 ոսկի փոխ տուած ես
եղեր Նիկիոսի սրբազանին:

Համագումարին մէջ խնդիր մ'ալ
ծագած է. խորհրդան սրբազան քա-
նի մը տարի յառաջ Կարնոյ խաչա-
տուր պէյի թախանձանօք յանձնա-
բարական մը դրած է եղեր խաչա-
տուր եպիսկոպոսի խնդրոյն նկատ-
մամբ առ Արիստակէս տեղապահ սրբ-
բազան. բայց այժմ նպատակաւոր
չիտելի խաչատուր եպիսկոպոսին. ա-
սիկայ հակասութիւն է, և հակասող
մը չկրնար դատաւորի ամբողջ նըս-
տիլ. հետեւեալ քորիմեան սրբազան
համագումար ժողովով մէջ պէտք չէ
որ նստի:

Կը յուսանք որ այն առաջադիւթիւ-
նը միայն Աղթամարայ խնդրոյն առթիւ
է. այսինքն միայն այս խնդրոյն համար
դատաւորական ամբողջ չզլիտի նըս-
տի. իսկ համագումարին ուրիշ ժո-
ղովներուն պիտի հրաւիրուի, մինչև
որ անոնց մէջն ալ հակասութիւն մը
բռնեն վրան և նորէն վճիռ տան:

Ճշմարիտը խօսելով, խորհրդան
սրբազանին վրայ կը ցաւիմ: այս մար-
դը միշտ իր անկեղծութեան համար
ինկած է. մարդ Աստուծոյ, հիմայ
խղճմտանքի ձայնին միտ գնելու ժա-
մանակ է. դու ալ քիչ մը յարմա-
րէ այնքան բազմաթիւ և համախոհ
համագումար Սուրբ Հայր, Միթէ
նոքս չ'դիտեմ թէ իրենց ըրածն ու
ընելիքը ճշմարտութեան դէմ է,
խղճմտանքի դէմ է. միթէ ասանք
չ'դիտեմ թէ իրենք հակասական հա-
մագումար մ'են ընդդէմ 1866ի հա-
մագումարին, յորում բողոք դու-
մարեալք և վիճակաւոր եպիսկոպո-
սանք անվաւեր վճռած են Սոյ Նի-
կիոսի հետ և Աղթամարայ խաչա-
տուրի կաթողիկոսութիւնը. միթէ
ասանք չ'դիտեն որ եթէ նախորդ
Համագումար ժողովը շտապօք վճռ-
ւած է եղեր խնդիրը և ասոր հա-
մար կը քակուի, նոյնպէս օր մ'իրենց
վճռածն ալ միևնոյն առաքիկութեամբ
պիտի լուծուի ուրիշ համագումարէ
մը, քանի որ իրենք առաջինէն աւե-
ր շտապաւ կուզեն վճռել: Ահա
ամենայն ինչ հակասութիւն, ամե-
նայն ոք հակասական: Բայց ոչ ա-
նոնք խորհրդան են, և ոչ խորհրդան
անոնցմէ մէկը. անոր համար բնական
էր որ ինքզինք մերժէր այդ դատա-
ւարական ամբողջէն, կամ ամբողջ իր-
մէն: Ինչ որ է, տակաւին այն վճռոյն
ի պաշտօնէ նորին սրբազանութեան
ծանուցած ըլլալը չ'հրատարակեց հա-
մագումարի Գեֆեմի Օգոստէն եֆէն-
տին:

Հակասութեանց մասին մէկ եր-
կու տող ալ չնորճ բրէ լսել ընթեր-
ցող: Աղթամարայ խնդրոյն առաջին
քննիչներ եղած են վանայ իդնատի-
ոս և Կարնոյ Գարութիւն սրբազան-
ները. ասոնք կառավարութեան հետ
մէկտեղ չ'նստած տեղեկագիրն ուրիշ
կերպ դրած են, առանց կառավա-
րութեան դրածնին ալ ուրիշ կերպ:
Այսպէս կիմանումք, Հակասութեան
չէ՞ այս: Նարեկայ Գեֆեմի վարդա-
պետն որ 'ի սիղբանէ մինչև այս ա-
յսինքն խաչատուր եպիսկոպոսի դէմ

բողոքող էր, այժմ 'ի նպատակ կը դը-
րէ կրտսի: Ահա և այս հակասութիւն
է: Բայց այս ամենուն մէջ գաղտնիք
մը կայ, զոր ուշիմանձինք կրնան նըշ-
մարել: Անմը որ յառաջ բողոքած
ու վերջէն 'ի նպատակ դրած են, կամ
ազդեցութեան տակ ինչապիսի առ տ-
հի բերանին փոխած են, կամ չահ-
ելով խաչատուր եպիսկոպոսէն
գիրքերնին փոխած են. այս փոփո-
խութիւնները կրած կը տեսնենք
մասնաւոր բողոքողներն ու քննիչնե-
րը, և մինչև այս օրուան համագու-
մար ժողովը: Խորհրդան սրբազանն
ալ փոփոխուած կը տեսնենք, սա-
կայն բողոքողին մէկաշինոյ հակառակ
գիրքով. այժմ, խորհրդան 'ի նպատակ
խաչատուր եպիսկոպոսին գիրք մը դը-
րած կերելի խաչատուր պէյի ազդե-
ցութեան տակ. բայց այսօր համա-
գումարին մէջ 'ի նպատակ չ'իտելի,
և ինք զինք անմասն կը ցուցնէ միւս
ամենուն հաղորդութենէն:

Ամբաստանեալ խորհրդանին ա-
թոռ չտալու խնդիր յարցոյ նախ Օ-
բադիր, և Ներսէս սրբազանը հար-
ւածելով փախցոյ. իսկ առջին համա-
գումար ժողով կազմեցին այն եպիս-
կոպոսներն՝ որք մեծ մասամբ ընդ-
ամբաստանութեամբ էին, և առանց
մէջ վարդապետ մը՝ որ Բիդհ. Ժո-
ղովով առջև ժողովողաց հանրագրու-
թեամբ ամբաստանեալ է. այդ առ-
բաստանեալ սուրբ հայրը զամբաս-
տանեալ խորհրդանն կուզեն հակասու-
թեան պատրուակաւ ժողովին հա-
նել և նախորդ համագումարէն դա-
տաւարտեալ խաչատուր եպիսկոպո-
սը արդար վճռել: Տես, ընթերցող,
ատենց հաշիւը. խորհրդանն այս հա-
մագումարէն մերժելով՝ պատրիար-
քի ընտրութեան համագումարէն ալ
մերժուած կըլլայ. Ներսէս սրբ-
բազան փախաւ, և ալ ետ չգառ-
նար, չ'հրապարակը որո՞ց կըմը-
նայ. իրենց: Այս շահր պատրիար-
քի ընտրութեան մէջ է: Ո՞վ խաչա-
տուր սրբազան, քանի՞ պատրիարք
և տեղապահ փոխեցիր քու խնդրո-
վըդ և քովդ եղած խորհուրդներով:

Մեր կրօնական ժողովը կամ Ս-
եպիսկոպոսները, որ պատրաստ էին
կառքով Մեծ-Նոյարքոսին երթալու
և Պատրիարքը դահլիճէջ ընելու. . .
ազդերն խաղաղութեան համար, ին-
չու չեն բարեհաճիր երթալ Ներսէս
սրբազանին աղաչելու որ իր պաշտօ-
նը շարունակեալ գլխին մեծ օգտին և
խաղաղութեան համար, որոյ մէջ է
և Աղթամարայ խնդիրն ալ: Խորհրդան
սրբազան երբեք չեկաւ Համագու-
մար ժողովին: (Արմաշու խորհրդան եպիս-
կոպոսին համար չէ խօսք. նա ան-
սալով զինքը հրաւիրողաց, ազդատի-
րարար յանձն առաւ այս ցարաե-
րուն Կ. Պօլիս դալ և անմիջապէս հա-
մագումար ժողովը դնաց. . .) Նարայէյ
Սրբազանը կրտսի, որ պէտք էր դալ
և Աղթամարայ խնդիրն էլ միմիայն
վիճակաւորն ներկայացնելու համար
փաստաբանէր. այս մասին մէջ իրա-
ւունք ալ ունէր, քանզի արդէն նա-
րեկացի Գեֆեմի վ. իր բողոքը վեհ.
Գեֆեմի Սրբազանին մատուցած էր խա-
չատուր եպիսկոպոսի վրայ: Բայց խո-
րէն Սրբազանն չեկաւ Համագումարին,
ոչ ալ Ներսէս Սրբազանին չ'ընայ: Ին-
չու համար արդեօք.

Արդ՝ նորէն Համագումար ժողո-
վին դատաւարք: Ս. Հայրք, դուք ին-
չու տակն ու վրայ կըլլաք. դուք ինչ
որ ընէք, Բիդհ. Ժողովը ձեր ըրածը
իրեն վճիռ չզլիտի ընդունի, այլ իր-
են կարծիք. սոսկ տեղեկագիր մը
պիտի ըլլայ ձեր ներկայացնելիքը,
զոր հաստատել կամ մերժել Բիդհ.
Ժողովը վերապահեալ է:

Ձգող կեցիք Ս. Հայրք, զԳեֆեմ
թայէք այս խնդրոյն մէջ: Ժողովը դը-
տան և ժամանակին առջև ձեր կո-
չիւք պիտի թողուք: Այդ խնդիրն
ամեն մարդ հասկցած է. 500 ոսկին
ալ վերջին մունետիկն եղաւ: Եթէ
խաչատուր եպիսկոպոսը փաստով պի-
տի արդարանայ, ինչպէս կը ճգնի, ու-
րեմն անոր այսքան տարուան փա-
սուց հաստուցումը պարտաւոր է տալ
ազգը: Ժողովըները երթալու և ա-
նոր սուքն ինչապիսի են որ այսքան տա-
րի անխրուածութեամբ արգելած են
զայն, և յանցաւորութեան վճիռ ալ
տուած. սաքն ինչապիսի և արձակում
խնդրելու են անկէջ, որոյ համար ա-
տենադրութեանց մէջ կեցած Սաե-
փան փաշայի խօսքերուն նայելով,
Պօգոս պատրիարքը կատկածեր է որ
Լուսաւորչեան աղանդին կը գիմէ,
եթէ անվաւեր թողու: Իսկ եթէ խա-
չատուր եպիսկոպոս իր յանդանքները
խոստովանելով մեղաց կըսէ, զգլման
գիր կուտայ ձեզ, և դուք արձակում
կուտաք, այդ ուրիշ բան է:

Գեֆեմի պարար Սահմ. մէջ ալ
շատ փնտռեցի Աղթամարայ համար
օրէնք մը, չգտայ. արդեօք կանխա-
դիտութեամբ չեն գրած թէ. . . .
վերաքննիչ յանձնաժողովն ալ նոր
բան մը դրած չէ այս մասին, կերելի
որ անասանադրական վիճակի մէջ
մնալ պէտք է Աղթամարայ ամբողջ
և կաթողիկոսին:

Սուրբ Կաթողիկոս
Հայեկեղեցական Տէ:

Կ. ՊՈԼՍՈՒ ԱԶԳԱՅԻՆՔ
(Շուր. Կէ 1506)

Մի հպատակ ազգ կամ հասարակ ժո-
ղովուրդ, որպիսի է հայն, քաղաքակա-
նապէս տիրող օրէնքին է ենթարկուած
արդէն: Այժմ դուք հասկանում էք ու-
րեմն, թէ ինչ է նշանակում ըստ Սահ-
մանադրութեան Քաղաքական ժողով,
քաղաքական դործ և եւ այլն: Ինչ ար-
դեւք է առաջ բերել մինչև այսօր սահ-
մանադրական քաղաքական ժողովը քա-
ղաքականապէս. յայտնի խաբում է ինքը
զինքը այդ ժողովը այդ անունով: Քաղ-
րիւրերն անդամ դադրեցնել ուղեց Բ.
Գուռը, որ սոսկ բացառութիւն տալ է
իւր պատրիարքարանի կողմից, և այժմ
դրածները չ'ընտանքեր. նա իր պաշա-
նատարներէն ալ տը է ստանայ ամեն քա-
ղաքական խնդիրներին մասին բացառու-
թիւններ և տեղեկութիւն, և ըստ այնմ
իրան օրինաց նայելով 'ի դործ է դնում
վճիռը: Չարմանալի չէ՞ որ Հայոց ազգի
Քաղաքական ժողովի անդամները շտա-
րը չը գիտնան ու չը կարողան արդիւ
բնական ժողովին զրադիլ թաղականների
կամ անհատների կողմէն: Գաւառ-
ներէ հարաւահարաթեանց տեղեկագիրն
ո՛ւր մնաց, Քաղաքական ժողովի այդ ա-
մենամեծ դործը:

Չարմանալի է արդար. երբ մի բան
դործ դառնայ, ժողովները իրենց են վե-
րաբերում պարծանքը: Եթէ մի պակա-
սութիւն, անկարելիութիւն, անհղու-
թիւն, ծախողութիւն հանդիպում է մի
որ և ինչ խնդրի, բռնում են Պատրի-
արքի օձիքը և աղէն, և քաղում հո՛ր քա-
չում, այն ինչ սահմանադրական երբեք
գործ կամ պատասխանատուութիւն չկայ
պատրիարքին: Բայց ի հօկելի Սահմանադ-
րութեան էն էլ ինչպիսի կարող է, երբ
ժողովները միմեան կամ մեծադոյն մասն
կազմեն ու բռնեն պատրիարքին դէմ,
էլ ինչ միջոցով հսկէ: Պատրիարքը իրա-
ւունք չունի ժողովները լուծելու կամ
Պատրիարքը կարող է յայտարարութիւն
անել ժողովը ինչ կամ նրան քուէին դի-
մել: Պատրիարքը ժողովներին մէջ իրեն
հասարակ երեւոյթիւն մի ձայն ունի մի-
այն, և խօսք ուղեղով՝ իրաւունք ստա-
նում է խօսելու: Բայց տեղը բերած մա-

